

ԻՄ ՁԵՌԱՏԵՏՐՍ

Պարոններ, այս վերնագիրը կարդալով չը կարծեք թե սնանկացած վաճառական մ'եմ եւ կու գամ հաշիւներս հասարակութեան ներկայացնելու: Պատիւ ունիմ յայտարարելու, որ կեանքիս մէջ վաճառական եղած չեմ երբեք եւ լինելու ալ տրամադրութիւն չունիմ, վասն զի խիղճս չներեր մէկ ու կէս ոսկոյ ուրիշի վաճառել այն ապրանքը, զոր ես մէկ ոսկոյ գնած եմ:

Առանց վաճառական լինելու՝ որոշեցի սակայն ձեռատետր մ'ունենալ, անոր մէջ նշանակել օրուան դէպքեր եւ, երբեմն այս դէպքերուն առթիւ՝ մահկանացուներու թերութիւններու վրայ ծիծաղիլ: Թո՛ղ Հերակղիտի աչերէն հոսած արտասուքով գետեր ձեւանան, թո՛ղ ազգային բանաստեղծներ Եփրատն ու Տիգրիսն Հայաստանի երկու աչեր ներկայացնեն եւ լան, թո՛ղ պ. Չուխաճեանին ալ եղանակներ յօրինել տան եւ եղանակով լան. – ես, պարոններ, ես կը ծիծաղիմ եւ ծիծաղելու համար ո՛չ եղանակի կարօտութիւն ունիմ եւ ոչ դաշնակի: Թերութիւններու վրայ լալն թերութիւններու մեծագոյնն է. խեղճութեան վրայ արտասուք թափելն ապացուցանել է թէ արիւն չունինք թափելու: Արտասուքը մանուկներու եւ կիներու (մեծ մանուկներու) բաժին է. կ'աղաչեմ, մի՛ դպիք ադոնց բաժինին:

Եւ չէք կարող երեւակայել, թէ ո՛րչափ բերկրութիւն պիտի զգամ՝ եթէ յաջողիմ ձեզմէ ծիծաղներ կթել այն դէպքերու, իրերու եւ անձերու վրայ, որոնց պիտի հանդիպիք ձեռատետրիս մէջ: Մոլութիւններու վրայ ծիծաղիլն առաքինութեան ճանքուն մէջ գտնուիլ կենթադրէ եւ, այս հաշուով, որչափ շատ ծիծաղ քաղեմ՝ այնքան նուազ մոլութիւն պիտի գտնեմ: Պէտք չէ մոռնալ սակայն այն դաս մը մարդերն, որք ուխտ եւ երդում ըրած են բնաւ չխնդալու: Այդպիսիներու հետ գործ չունիմ, վասն զի ադոնց երեսէն ժպիտ քաղելն աւելի դժուար է, քան թուրք կառավարութենէ բարենորոգում յուսալն, մանաւանդ երբ նկատողութեան առնէք, որ ճնշում բանեցնելու համար չունիմ ես ո՛չ ծանուցագիր, ո՛չ դեսպանաժողով եւ ոչ նաւատորմիդ:

Անկողմնակալութեանս վրայ վստահացնելու համար կը յայտնեմ թէ այնպիսի կացութիւն մ'ունիմ, որ չստիպեր զիս աչառութիւն ընելու: Փառք Նախախնամութեան, բարեկամ չունիմ որ աչառութիւն ընեմ: Բայց մի՛ կարծեք թէ կիրքով պիտի խօսիմ, քա՛ւ լիցի...թշնամի ալ չունիմ: Մի՛ զարմանաք, պարոններ. աշխարհիս երեսը այնպէս կ'ապրիմ, ինչպէս դուք կ'ապրիք երբեմն թատրոնի մէջ. միայն հանդիսատես կը լինիմ ներկայացման առանց դերասաններու գործոյն խառնուելու: Ընկերութիւններէ